

7 - 14 Դեկտեմբեր

Անձրեւ եւ ձիւն. տժգոհութեան պատճառ տալու չափ ցուրտ չկայ. լրագրի յարձակմանց մէջ քիչ մը պաղութիւն կայ:

Հարուստի մը զաւակը երգիչ օրհորդի մը հետ կփախչի: Երթան բարեաւ:

Լեզուաքննութիւնն քայլ մ'ալ առաջ կ'երթայ:

14 - 21 Դեկտեմբեր

Բժիշկ ըլլալու ամիս:

Քիթ մը չկայ, գլուխ մը չկայ, ակոյալ մը չկայ, ականջ մը չկայ որ չցաւի. ի՛նչ խայտառակութիւն է աս. յանցանքն իրենցն է. զգուշանան թող. մինչեւ լոյս պարելու հետեւութիւնն է:

Բժիշկներն ալ թող վաստկին. ողջ ըլլան որ մեռցնեն մեզի:

22 - 31 Դեկտեմբեր

Անձրեւախառն ձիւն:

Հաշուեկշիռներ հանելու պատրաստութիւններ:

Հարուստ մը չորս աղքատ աղջիկներ կը կարգէ հոգւոյն համար: Պետական մարդու մը ճառէն կհասկցուի, թէ աշխարհիս խաղաղութիւնը անվրդով պիտի մնայ:

Ամսոյս մէջ ծնող զաւակներէն մեծ բան չակնկալուիր:

Մնանք բարով:

Տեսնուինք 1893 - ին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՆՑԻՑ

Ի բարձմանէ ամօթոյ մինչեւ ցայժմ են ամբ 10

Ի ծաւալմանէ շողոքորթութեան ի թերթս Հայկականս 9

Ի մտից պճնասիրութեան ի կրօնաւորս 20

Յանգործադրութենէ Ներքին Կանոնադրութեան Ընդհանուր ժողովոյ 8

Ի հաստատութենէ աներեսութեան 10

Յորոշմանէ հաստատութեան Ընծայարանի 6

Ի կործանմանէ Շահ - Նուպար վարժարանի 15